Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.
պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:
Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

355.2
Հ-11

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք

№ 35

ԿՈՉ
1909 թ. ԾՆՎԱԾՆԵՐԻ ԶՈՐԱԿՈՉԻ ԱՌԹԻՎ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Հ. Ս. Խ. Հ. ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ

1931

Հանրային գրադարան
Гос. Публ. Библиотека
ՀԱՍՀ ԳԱ ԳՐԱԴԱՐԱՆ
СССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
12487-52

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ
ԳԼԱՎԼԻՏ 3996 (Բ)
ՊԱՏՎԵՐ № 4509
ՏԻՐԱԺ 5000

1 MAR 2010
355.2
Հ-11
1784

ԲԱՆՎՈՐՆԵՐ, ԿՈԼԽՈԶՆԻԿՆԵՐ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՎՈՐ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐ

Թանկագին ընկերներ

1909 թվականին ծնվածների զորակոչը տեղի է ունենում չափազանց բարդ և սուր միջազգային պայմաններում, երբ պատերազմի վտանգն ավելի իրական է դարձել, քան երբևէ:

Հնգամյակի յերրորդ վճռական տարում, այն չրջանում, յերբ ավարտվում է մեր յերկրի սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումը, չնորհիվ ամբողջ ճակատում կատարվող հաղթական սոցիալիստական արշավի, մենք ձեռք ենք բերել համաշխարհային-պատմական նշանակություն ունեցող չտեսնըված հաջողություններ՝ յերկրի ինդուստրացման, կոլտնտեսական ու խորհտնտեսական շինարարության ասպարիզում և համատարած կոլեկտիվացման հիման վրա, կուլակության վորպես դասակարգի վերացման բնագավառում:

Մենք հաջողությամբ կատարեցինք և գերակատարեցինք յերկրի ինդուստրացման և ամբողջ գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման, մասնավորապես նրա

09 SEP 2013

41.150

կոլեկտիվացման այն պլանը, որ ընդունել է Համկոմկուսի Կենտկոմը և 16-րդ համագումարը:

Այս տարի գարնանը, սոցիալիստական հատվածն ի դեմս խորհրդային— կոլեկտիվ տնտեսությունների, գերակշիռ դեր նվաճեց գյուղատնտեսական արտադրության մեջ, բացարձակ գերազանցություն ձեռք բերեց անհատական գյուղացիական հատվածի նկատմամբ՝ գյուղացիական ցանքերի տարածության ավելի քան յերկու յերրորդ մասը կազմում են կոլտնտեսությունների ցանքերը. յերկրի հքավոր և միջակ տնտեսությունների կիսից ավելին (57,1 տոկոսը) միացել է կոլտնտեսություններում. Կոլտնտեսական գյուղացիությունն արդեն դարձել է հողագործության կենտրոնական դեմքը:

Մեր յերկրի սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումն ավարտելու ճանապարհին այդ վճռական հաղթանակը մենք ձեռք ենք բերել չնորհիվ կուսակցության հիմնական դծի անշեղ և հետևողական իրականացման, անհաչտ և ամենորյա պայքար մղելով դասակարգային թշնամու և կուսակցության մեջ նրա գործակալությունը հանդիսացող՝ դլխավոր վտանգ աջ թեքման դեմ և «ձախ» խոտորումների ու նրանց հանդեպ ցուցաբերվող հաչտվողականության դեմ:

Հակառակ կապիտալիստական աշխարհին, որն ապրում է տնտեսական սուր ճգնաժամ, պարտություններ է կրում զաղութներում և իրենից կախումն ունեցող յերկրներում, որոն ընկել է քայքայման և նեխման վիճակի մեջ,— Խորհրդային Միությունը թևակոխել է սոցիալիստական շինարարության վերելքի զարդացման շրջանը: Խորհրդային Միության սոցիալիստական արշավն ունի միջազգային հեղափոխական նշանակություն, վորովհետև նա ոդնում է կապիտալիզմի յերկրների բանվոր դասակարդին և զաղութների աշխատավոր մասսաներին՝ հախուռն արշավ գործելու կապիտալիզմի ամրոցի վրա:

Մեր յերկրի սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցման սրնթաց տեմպը կատաղեցնում և չտեսնված սպառազինման է դրդում իմպերիալիստական պետություններին, վորոնք ուժեղ թափով պատերազմի յեն պատրաստվում ԽՍՀՄ-ի դեմ, և միևնույն ժամանակ մեզ մոտ ծայր աստիճան սրում է դասակարդային պայքարը քաղաքում ու գյուղում, յելույթների յե դրդում դասակարդային թշնամու գործակալներին կուսակցության ու խորհրդային իշխանության ձեռնարկումների դեմ: Մեզ մոտ ակտիվանում են դասակարդային թշնամին՝ կուլակը և նրա զաղափարակոն ներշնչող ու իմպերիալիզմի գործակալ դաշնակները, վորոնք ոդտագործում են մեր դժվարությունները՝ ամման դժվարությունները, հակահեղափոխական նպատակներով:

ԽՍՀՄ-ի սոցիալիզմի շրջանը թևակոխելը

և ընթացիկ տարում սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցման ավարտելը վիթխարի չափով բարձրացրին ու բարձրացնում են Խորհրդային Միության պաշտպանունակությունը և Կարմիր Բանակի՝ պրոլետարական դիկտատուրայի այդ գործիքի, մարտունակությունը:

Կարմիր բանակը պրոլետարական պետության զորության ամենագլխավոր գործիքն է: Նա իր գոյությամբ իսկ զսպում է դասակարգային թշնամիներին, հետ է պահում նրանց Խորհրդային Միության վրա հարձակվելու ձգտումներից:

Կարմիր բանակը, ի տարբերություն բուրժուական ազգային բանակներից, հանդիսանում է պրոլետարիատի միջազգային դասակարգային բանակը: Նրա նպատակն է՝ պաշտպանել Խորհրդային Միությունը, վորպես հզոր ինտերնացիոնալ շարժման հենարանը, վորպես ամբողջ աշխարհի պրոլետարիատի և ճնշված ժողովուրդների սոցիալիստական հայրենիքը: Կարմիր բանակի ինտերնացիոնալիզմն արտահայտվում է ազգային հարցի պրոլետարական լուծմամբ, զինված ուժերի շինարարությամբ:

Կենտրոնացված ղեկավարությամբ միասնական Կարմիր բանակն իր շարքերում ունի ազգային զորամասեր, վորտեղ ուսուցումն ու ծառայությունը կատարվում է մայրենի լեզվով և վորոնց կենցաղում պահպանվում են ազգային առանձնահատկությունները:

1909 թվականին ծնված ների զորակոչը սկսվում է սեպտեմբերի առաջին որերը:

Մինչև զորակոչի սկիզբը շատ քիչ ժամանակ է մնացել: Զորակոչի նախապատրաստումն ամենուրեք բավարար չի ընթանում: Ցերկրի պաշտպանության գործում տեղ-տեղ նկատվում է ինքնահոս, աջ պրակտիկա: Այնինչ, զորակոչը հանդիսանում է դասակարգային պայքարի տարրերից մեկը և լուրջ վերաբերմունք, մեծ ուշադրություն է պահանջում բոլոր կուսակցական, կոմյերիտական, խորհրդային ու արհմիութենական կազմակերպությունների և մեր յերկրի բոլոր աշխատավորներից: Ամենափոքր անուշադրությունը, զորակոչի նախապատրաստական աշխատանքի թերագնահատումը նպաստավոր հող կստեղծի դասակարգային թշնամու և նրա գաղափարախոս դաշնակիների համար թափանցելու Կարմիր բանակի շարքերը քայքայող աշխատանք կատարելու համար:

Անհրաժեշտ է գործադրել բոլոր հնարավոր միջոցները՝ կենսագործելու կուսակցության հետևյալ դիրեկտիվները—

ա) «Վոչ մի դասակարգայնորեն սոցիալապես խորթ տարր Կարմիր բանակի շարքերում»:

բ) «Տանք Կարմիր բանակին 100 տոկոսով գրագետ զորակոչիկներ»:

գ) «Տանք Կարմիր բանակին ֆիզիքապես

առողջ և քաղաքականապես կայուն յերիտասարդություն»:

դ) «100 տոկոսով ներկայանալ հավաքավայրերը»:

Այդ դիրեկտիվները հնարավոր է իրագործել միմիայն վորակապես բարձրացնելով այն ծավալուն աշխատանքը, վորը կատարվում է բոլոր ձեռնարկություններում, խորհտնտեսություններում, կոլտնտեսություններում, անհատականների մեջ և գյուղխորհրդում, խորհրդային ամբողջ հասարակայնության ակտիվ աջակցությամբ:

Ազգային փոքրամասնությունների, մանավանդ քրդերի մեջ կատարվող աշխատանքի թույլ լինելը պահանջում է, վոր մենք առանց հապաղելու լուրջ ուշադրություն նվիրենք այդ բնագավառին:

Ազգային փոքրամասնությունների մեջ կատարվելիք աշխատանքի մասին Հայկոմկուսի Կենտկոմի կայացրած վորոշումներն իրականացնելու նշանաբանով, ուժեղացնենք անպատասխանատվության և ոպորտունիզմի դեմ մղվող պայքարը:

Ընկերնե՛ր· զորակոչում, քաղաքական այդ կարևորագույն կամպանիայում, տեղ չպետք է ունենա ինքնահոս ու ինքնահանգստացումը: Պետք է մոռանալ, վոր կուլակը կատաղի դիմադրություն է ցույց տալիս մեր սոցիալիստական չինարարությանը: Կուլակն ու դաշնակը աշխատելու յեն զորակոչն ևս ոգտագործել իրենց հակահեղափոխական նպատակների համար:

Հիշեցեք, ընկերներ, վոր անցյալ տարի, այն գյուղերում, վորտեղ կուսակցական կոմյերիտական և հասարակական կազմակերպությունները, գյուղխորհուրդներն ու ոժանդակող հանձնաժողովները վոչինչ չեյին արել, կուլակներին և դաշնակներին հաջողվել եր ուժեղացնել իրենց աշխատանքը և նույնիսկ առանձին սոցիալապես խորթ տարրեր թափանցել եյին Կարմիր բանակի շարքերը: Անհրաժեշտ է մոբիլիզացիայի յենթարկել մեր բոլոր ուժերը կազմակերպված, անողոք հակահարված տալու դասակարգային թշնամու և նրա գաղափարախոս դաշնակների բոլոր դավերին ու վոտնձգություններին: Ցուցաբերեք դասակարգային ավելի մեծ զգոնություն, ժամանակին մերկացրեք կուլակների ու դաշնակների դավադիր աշխատանքը և անողոք հակահարված տվեք նրանց, կասեցնելով կուլակ-դաշնակյան ագիտացիայի ամենափոքր ազդեցությունը զորակոչի ընթացքի վրա:

Ընկեր բանվորներ, կոլտնտեսականներ, և աշխատավոր գյուղացիներ· ամենաակտիվ ոժանդակություն ցույց տվեք Կարմիր բանակի զորակոչիկների դասակարգային ընտրությանը, ակտիվորեն քննարկեցեք ձեր լայն ժողովներում բոլոր զորակոչիկների ցուցակները, յերևան հանեք սոցիալապես խորթ տարրերին և մի թողնեք նրանց Կարմիր բանակի

շարքերը, վորը զենքը ձեռքին պաշտպանում է Հոկտեմբերի սոցիալիստական շինարարության նվաճումները իմպերիալիստական վոտընձգություններից: Զեղնից ամեն մեկը պետք է իրեն կատարելապես պատասխանատու զգա 1909 թվականի ծնված զորակոչիկների սոցիալական ընտրության համար: Բարձրացրեք այդ գործի պատասխանատվությունը և ավելի մեծ ուշադրություն նվիրեցեք նրան, անողոք պայքար մղեցեք զորակոչի նախապատրաստման ասպարիզում արտահայտվող ինքնահոսի դեմ, վորն ոգնում է դասակարգային թշնամուն՝ կուլակին և դաշնակին:

Դուք պարտավոր եք արժանի լրացում տալ Կարմիր բանակին՝ առաջավոր հարվածային բանվորներից, կոլտնտեսականներից, և անհատական չքավորներից ու միջակներից, վորոնք վաղվա կոլտնտեսականներն են:

Ընկերներ, ակումբները, լենանկյունները, խրճիթ-ընթերցարանները և մամուլը դեռ բավականաչափ աշխատանք չեն ծավալել զորակոչի շուրջը. առանց ուշացնելու ուժեղացրեք նրանց աշխատանքը: Միջոցներ ձեռք առեք վերացնելու այդ բնագավառում առաջացած ճեղքվածքները, ներգրավեցեք այդ աշխատանքին զորակոչիկներին և նրանց ընտանիքի անդամներին, աշխատանք ծավալեցեք կանանց մեջ, պատրաստվեցեք զորակոչիկներին հանդիսավոր կերպով ճանապարհ դցելու դեպի հավաքավայրերը և Կարմիր զորանոցը:

Լայն ծավալեցեք սոցմրցումն ու հարվածայնությունը ձեռնարկությունների, կոլտնտեսությունների գյուղխորհուրդների շրջանների և առանձին զորակոչիկների միջև:

Ցերկրի ինդուստրացման հետ միասին, զարգանում է նաև Կարմիր բանակի ռազմական տեխնիկան, վորը նորանոր պահանջներ է առաջադրում զորակոչիկներին:

ԶՈՐԱԿՈՉԻԿ. Դու պետք է գիտակցես այդ և պատրաստ լինես տիրապետելու ռազմական տեխնիկային:

ԶՈՐԱԿՈՉԻԿ, Դու պետք է հաստատապես ըմբռնես, վոր պրոլետարական պետությունը քեզ Կարմիր բանակ է կանչում՝ ռազմական գործը սովորեցնելու, վորպեսզի դու ամեն բոպե պատրաստ լինես, վորպես գիտակից մարտիկ, զենքը ձեռքիդ պաշտպան կանգնելու սոցիալիստական հայրենիքիդ՝ նրա բոլոր թշնամիների դեմ:

Դու պետք է գիտենաս, վոր անցնելու յես ռազմական պատրաստության մարտական դպրոցը, ձեռք ես բերելու մարտի համար անհրաժեշտ ռազմական գիտելիքներ ու վարժություններ, քեզ դաստիարակելու յես վորպես կարգապահ, նախաձեռնող, կայուն, կռփված մարտիկ՝ գիտակից իր դասակարգի ու պետության շահերին, պատրաստ առանց կյանքդ խնայելու, զենքը ձեռքիդ կռվելու խորհրդա-

41. 150

յին իշխանության համար, կոմունիզմի համար:

Ընկերներ, կիրառենք զորակոչը կուսակցության դիրեկտիվների հիման վրա, հնգամյակի յուրաքանչյուր վճռական տարվա մարտական լոզունգով, սոցմրցման ու հարվածայնության լայն ծավալմամբ:

Հայաստանի ՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի նախագահի
տեղակալ՝ Ռ. ԴԱՇՏՈՅԱՆ

Հայաստանի Ժողկոմխորհի նախագահի
տեղակալ՝ Ա. ՑԵՐԶՆԿՅԱՆ

Զորակոչին ոժանդակող հանրապետական հանձնաժողովի նախագահ՝
Դ. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

Կենտգործկոմի քարտուղարի ժ. պ.
Գ. ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆ

ՀԱՆՐՊԵՏ. ՀԱՆՐՄՏԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀԱԽԱՀ — СССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0217885